ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱԳԴԱՅԻ ՆԱԽԱՏԻՊԻ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՉԱՐԵՆՑԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ*

ՀՏԴ 821.19

Արա Զարգարյան
Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտ,
կրտսեր գիտաշխատող,
ԵՊՀ հայցորդ,
Երևան, Հայաստանի Հանրապետություն:
Zargaryanara1994@gmail.com

Եղիշե Չարենցի պոեզիայում կնոջ նախատիպը ունեցել է յուրահատուկ ընկալում: Պոետիկ այդ համակարգում յուրաքանչյուր կանացի նախատիպ իր հետ միասին Չարենցի բանաստեղծական համակարգ բերել է նոր ընկալում, խորհրդանիշ և գեղարվեստական գեղանկար: Դա հստակ երևում է Չարենցի կողմից «իր կանանց» ձոնված ստեղծագործություններում: Այդ ցանկում բացառիկ դիրք է գրավում Չարենցի առաջին և վաղամեռիկ կինը՝ Արփենիկը: Արփենիկը դառնում է Չարենցի պոետիկ համակարգում գերագույն արժեքներից մեկը: Նա մյուս կանանց համեմատ ստանում է գերակա դիրք՝ կրում աստվածային զուգահեռ: Չարենցի կյանքի վերջին շրջանում գրված գործերում կնոջ ընկալումները պոետիկ համակարգում ևս դառնում են յուրահատուկ: 9–ամյա Մագդայի կերպարում Չարենցը սինթեզում է կանացիի տարիքային բոլոր էտապները, դրսևորումները: Մադգդայով ուրվագծվում է կանացի գեղեցկությունը, այն գովերգվում է հայ միջնադարյան բանաստեղծական ավանդույթով: Ներկայացվում է կնոջ ամբողջական զարգացումն ու գեղեցկության բոլոր դրսևորումները: Մագդայի հետ երևակայական սեռային–սիրային կապով Չարենցն ընդգծում է ֆրոյդյան բանաձևով սահմանված մարող կյանքի ու ցանկության նկատմամբ բավարարումը: Կյանքի սահմանագծին կանգնած՝ մահվանն ավելի մոտեցող բանաստեղծի համար Մագդան դառնում է նոր կյանքի, կանացիության ու գեղեցկության մոդելը: Ուրվագծվում է հավերժական կանացիի չարենցյան ընթերցումը:

Բանալի բառեր՝ Չարենց, Մագդա, նախատիպ, Ֆրոյդ, պոեզիա, Արփենիկ, Արուս, արխետիպ:

Ներածություն

Եղիշե Չարենցի բանաստեղծական համակարգում և ստեղծագործական ժառանգությունում կինը գրավում է ուրույն ու բացառիկ տեղ: Չարենցի մոտ բացառիկ են նաև կնոջ կերպարի բանաստեղծական ընկալումները: Դրանք բազմաշերտ են, խորքային, թեմատիկ մեծ ընդգրկումներով, ինչպես նաև՝ չարենցյան ուրույն ընկալումներով: Չա-

* Հոդվածը ներկայացվել է 3.08.2022:
Տպագրության է երաշխավորել բ.գ.թ. դոցենտ՝ Ա.Բեքմեզյանը: 08.08.2022:
Հոդվածը տպագրության է ընդունվել 19.08.2022:

րենցի կյանքում կանայք շատ են եղել և հատկանշական է, որ յուրաքանչյուր կին իր հետ միասին Չարենցի բանաստեղծական համակարգ բերել է նոր պատկեր, ընկալում, ինչպես նաև՝ կանացի նախատիպի գեղարվեստականացման մոդել: Կինն ու կանացին բանաստեղծական աշխարհ մտնելու լոկոմոտիվ հանդիսացան Չարենցի ստեղծագործական կյանքի սկզբում: Աստղիկ Ղոնդաղչյանին նվիրված «Երեք երգ տխրադալուկ աղջկան» ժողովածուն ազդարարեց Չարենց բանաստեղծի մուտքը գրականություն: Աստղիկին նվիրված առաջին գրքում արդեն ուրվագծվում է կանացիի չարենցյան ընկալումների յուրահատկությունը: Գրքում ընդգծվում է Աստղիկի նկատմամբ Չարենցի սիրո իրական և երևակայական դրսևորումները: Չարենցը 1917 թվականին Մոսկվայում տպագրում է «Ծիածան» գիրքը և նվիրում Կարինե Քոթանճյանին: Կարինե Քոթանճյանն ինքը մեկնաբանում է «Ծիածանի» արարման նախապատմությունն ու որոշակի տեղեկություններ տալիս, թե ինչպես են գրքի ստեղծման համար ազդակներ ծառայել իր աչքերի հետ կապված չարենցյան ընկալումները: Այս գրքում ևս շարունակվում է Աստղիկի աչքերից եկող գունային,պատկերային համակարգի գեղագիտական ընդգծումն ու դրանից բխող խորհրդանշային մոդելի ձևավորումը: «Ծիածանում» պտտվում և նոր իմաստային երանգ է ստանում կապույտը: Գրքում միախառնվում է սիրերգությունն ու աստվածերգությունը և դա ազդարարվում է շարքը բացող առաջին բանաստեղծությամբ՝ «Լուսամփոփի պես աղջիկ»: Չարենցի կողմից ծիածանի գունային պատկերներով արարվում է խորհրդանշային համակարգ, որը դառնում է գեղագիտություն գումարած խորհրդանշային պատկեր, որով ստեղծվում է գեղանկար: Սույն տրամաբանությունն ու համակարգը մասնակի պահպանվում են նաև Չարենցի՝ կնոջը նվիրված հաջորդ գործերում ևս՝ մասնավորապես՝ 1920 թվականին տպագրված և Արմենուհի Տիգրանյանին ձոնված «Էմալե պրոֆիլը Ձեր» գրքում: Չարենցի պատանեկան սերերի կողքին հիշատակվում է նաև Լյուսի Թառայանի անունը: Նրան ձոնված բանաստեղծություններում ևս պահպանվում է Աստղիկից եկած սիրո վեհ զգամունքի հրապարակային շեփորահարումը: Չարենցի կանանց ցանկում բացառիկ էր նաև Արուս Ոսկանյանը, ում հետ Չարենցի մտերմությունը սկսվում է 1922 թվականից և ավարտվում բանաստեղծի ողբերգական մահով: Նրանց մտերմությունը պտտվում է թատրոնի և արվեստի ոլորտում: Դեռ 1923 թվականից Չարենցի ու Արուս Ոսկանյանի միջև կար ջերմ նամակագրական կապ: Արուսը դառնում է հենց այն արխետիպային դուռը, անցումը, որի կրքոտ, կանացի համակարգը Չարենցին ուղեկցում է դեպի մահ: Դրա գիտակցումն է դառնում Արուսին ձոնված էրոտիկ գործերում եղեգառնականություն խորհրդանշային համակարգի անվերադարձ անկումը՝ մահը: Չարենցի համար մահվան անխուսափելիությունն արդեն բացարձակ ճշմարտություն է: Արուս Ոսկանյանը դառնում է սահմանագծին կանգնած բանաստեղծին ուղեկցողը: Արփենիկը Չարենցի պոետիկ համակարգում դառնում է որպես գերագույն արժեք: Նա ստանում է աստվածայինի շտրիխը՝ պոետիկ համակարգում զուգահեռվելով Քրիստոսի հետ: Դա հստակ երևում է «Ես ամեն առավոտ, երբ հանկարծ» գործում որտեղ ներկայացնում է իր հոգեվիճակը, ապրումները, նկարագրում է նաև իր կարմիր սենյակը, որտեղ իր կյանքի վերջին շրջանն է ապրել Չարենցը: Արփենիկը դառնում է Չարենցի պոետիկ համակարգում, ինչպես նաև՝ կյանքում, գերագույն արժեք, որը դրսևորվում է Աստվածային սուրբ երրորդության Որդու բնության հետ զուգահեռումով:

Մագդայի նախատիպի չարենցյան ընկալումը

Կանխազգալով մոտալուտ վախճանն ու կյանքի անցողիկությունը՝ Չարենցի պոեզիայում հետաքրքիր շտրիխ է ավելանում՝ հանձին Մագդայի, ում Չարենցը ձոնել է 26 բանաստեղծություն: 1936 թվականի օգոստոսին՝ Ծաղկաձորում անցկացրած շրջանում, Չարենցը շատ է ստեղծագործել: Այդ ստեղծագործությունների մեջ կան ձոնված գործեր Ծաղկաձորում հանգստացող մարդկանց երեխաներին: Այդ երեխաներից էր 9-ամյա Մագդան՝ բեմադրիչ Արշակ Բուրջալյանի դուստրը: Ինչպես Դավիթ Գասպարյանն է նշում՝ այս շարքի բանաստեղծությունները կենսանորոգ գովք ու փառաբանություն են նորափթիթ գեղեցկությամբ կյանք մտնող աղջկան: Չարենցի կյանքում այդ շրջանը հոգեբանական անկման, մահվան նախապատրաստության շրջան էր: Դա հստակորեն տեսնում ենք նույն թվականի հուլիսին Արուս Ոսկանյանին ձոնված գործերում: Ստեղծագործությունների արխետիպային համակարգում պտտվում է մահվան ուրվականը: Մագդային նվիրված ստեղծագործությունները նույն շրջանի գործեր են, որոնք գրվել են ուղիղ երկու ամիս անց: Դա գալիս է ապացուցելու, որ Չարենցի մոտ հոգեկան ծանր վիճակը ո՞չ միայն չէր անցել, այլ ավելի էր սրվել: Մոտալուտ մահվան՝ անգիտակցականում ծվարած վախի նևրոզը սկսում է ահագնանալ: Զիգմունդ Ֆրոյդը նշում է, որ լքվածության շեմին կանգնած մարդու մոտ գալիս է աղետի անհաղթահարելիության վտանգը.

«Նա իրեն տեսնում է լքված բոլոր պաշտպանող ուժերի կողմից և հանձնվում մահվանը[1]»:

Մահվան վախն իր ներսում կրելով՝ Չարենցը տեսնում է նոր կյանք մտնող մարդկային մոդելին: Տեղի է ունենում հստակ տարանջատում՝ կյանքի և մահվան: Բնականաբար դեպի մահ գնացողի համար կյանքի նկատմամբ կա անբավարարվածություն, սակայն կա գիտակցում, որ մահն անխուսափելի է: Ուստի պոետի մոտ ցանկություն է առաջանում նայել երիտասարդությանն ու գովերգել նրանում կուտակված ու դեպի ապագա սլացող կյանքը: Տեղի է ունենում կյանքն այլ աչքերով տեսնելու մոտեցումը: Տվյալ դեպքում նոր կյանքի խորհրդանիշը դառնում է 9–ամյա աղջնակը՝ Մագդան: Նա իր վրա է կրում կյանքի ամբողջ զարգացումը, բերկրանքն ու շարունակականությունը: Սրան գումարվում է նաև այն, որ Մագդան աղջնակ էր, ու նրա կերպարում Չարենցը սինթեզում է կանացի գեղեցկությունը, նրանով տեսնում է կնոջ հասունացման բոլոր տարիքները, կանացի գեղեցկությունն ու բնությունը: Չարենցի գրչով պահպանվում է ծերունի Գյոթեի «Մարիենբադյան էլեգիայի» և Էդգար Ալան Պոյի «Անաբել–Լի» գործերի գաղափարական ավանդույթները: 9-ամյա Մագդան դառնում է նոր կյանք մտնող կնոջ ու նրա զարգացման տարբեր փուլերի խորհրդանիշ: Աչքի առաջ ունենալով նոր կյանքի, գեղեցիկի ու կանացիի պատկերը՝ կերտվում է այս կյանքի ու գեղեցիկի ընթացքն ու շարունակականությունը: Կարելի է նշել, որ ոչ ծերունի Չարենցը Սաադիի աչքերով տեսնում է պարտեզում պտտվող կույսին ու սկսում են մտորումները.

«Բացվել ես՝ հրե մի վարդ,–
Մարմինդ՝ ծաղիկ մի սուրբ,–
Սիրում եմ մարմինդդ նուրբ,–
Ուզում եմ՝ տրվես ինձ արդ[2]»:

---

[1] Տե՛ս՝ Զիգմունդ Ֆրոյդ, «Ես և Այնը», Երևան, 2020, էջ 76:
[2] Տե՛ս՝ Դավիթ Գասպարյան, «Նորահայտ էջեր», Երևան, 1996, էջ 103:

Մագդայի՝ այդ ժամանակվա նախատիպի վրա կառուցվում է ապագայի չարենցյան տեսիլքն ու իրականացվում է այդ տեսլիքի գովաբանություն: Չարենցը ստեղծագործություններում Մադգայի հետ «հարաբերվելով»՝ ստանում է սեռական բավարարում: Արխետիպային մոդելով տեղի է ունենում կյանքի երկարաձգման փորձ՝ պրոցես: Սա ևս շարժվում է Զիգմունդ Ֆրոյդի հոգեվերլուծության մոդելին համահունչ. *«Այն, ինչ սեր ենք կոչում, ըստ էության հենց այն է, ինչը սովորաբար անվանում են սեր և որը գովերգում են պոետները՝ սեռական սեր, սեռական բավարարում ստանալու նպատակով[1]»:*

Մագդայի նկատմամբ տենչանքը ներկայացվում է երազային, միֆային: Սրանով տրվում է իրականությունից շեղվելու և երևակայական մակարդակում այս ստեղծագործությունն արարելու բանալին, որով ուրվագծվում է Մագդայի նախատիպի հիմքով ճանապարհորդությունը դեպի ապագա, դեպի երազային վիճակ.

«Դու, Մագդա, սկզբից նեթ
Գերեցիր, բուրեցիր որպես
Մանկական մարմին, որ ես
Համբուրել եմ քնում հեշտավետ[2]....»:

Մագդայի մարմնական գեղեցկությունը գովերգելով՝ Չարենցն ընտրում է միջնադարյան՝ կնոջ գովերգման ավանդույթը և ամենը ներկայացվում է բնապատկերներով: Մագդային ձոնված սոնետներից մեկում Չարենցը հստակ խոսում է իր կյանքի անցողիկության մասին և կյանքից կառչած լինելու ցանկությունն այնքան մեծ է, որ մինչև մահվան հրեշտակի գալուստը ցանկալի է զգալ նաև Մագդայի կերպարում կենտրոնացած կանացիի դրսևորումները.

«Թող մարմնիդ վարդերը բորբ
Ախ, թերթե իմ որբ լեզո՜ւն–
Չիմանամ երբեք ես որ
Անցնում է իմ կյանքն իզուր[3]...»:

Կյանքի անցողիկությամբ ու կանացիին տրվելու անկարողությունը նկատելի է Մագդային նվիրված գործերի մի շարք դետալներում: Չարենցի մոտ ուրվագծվում է լիբիդոյի և կյանքի անկման զուգահեռները: Հոգեբանական նևրոզի դրսևորումներով տրվում է սեռականի ու կյանքի անկման Ֆրոյդյան հերթական բանաձևը. *«Կան տղամարդիկ, որոնք, ինչպես կանայք, կլիմակտերիա են դրսևորում և իրենց նվազող պոտենցիայի և աճող լիբիդոյի ժամանակ կպչուն վախի նևրոզ են ցուցաբերում[4]»:*

Չարենցի այդ շրջանի սեռական վիճակի մասին եզրահանգումներ անում ենք իր գործերից: Նրա մոտ սեռականության անկման նևրոզի կողքին բնականաբար կա մոտալուտ մահվան հոգեբանական վախը: Այդ երկուսի միագումարը, այդ երկուսի անկումը Չարենցի համար գոյության անկում է: Եվ այդ անկման ֆոնին նոր կյանք մտնող կանացիի՝ գեղեցիկի բանաստեղծականացումով տրվում է նոր կյանքի գովերգումը: Մագդայի նախատիպով տրվում է կապը կյանքի հետ, իսկ Մագդան դառնում է կու-

---

[1] Զիգմունդ Ֆրոյդ, նշվ. աշխ., էջ 88:
[2] Դավիթ Գասպարյան, նշվ. աշխ., էջ 103:
[3] Նույն տեղում՝ էջ 109:
[4] Զիգմունդ Ֆրոյդ, նշվ. աշխ., էջ 88 :

սության ու կանացիության զարգացման հենքը: Մանկահասակ երեխայով սկսվում է գովերգումը որպես երեխայի: Դա են փաստում Մագդային նվիրված առաջին 4-5 գործում տրված նրա մանկական գեղեցկությունը: Այդ ամենից հետո բանաստեղծություններում առկա ներքին շարժումը տալիս է Մագդայի տարիքային մեծացում, որից անցում է կատարվում երեխայից դեպի կույս, կույսից դեպի հասուն կին: Այդ բոլոր անցումներում Չարենցը կնոջ գովերգության հայ միջնադարյան բառային ավանդույթով՝ բնապատկերներով, ներկայացնում է կանացիության ընթացքն ու հասունացումը:

Եզրակացություն

Կյանքի մայրամուտին նոր կյանք մտնող աղջնակը Չարենցի պոեզիայում դառնում է կյանքի երկու մոդելներից մեկը՝ դռան մի կողմում աղջնակն է, ով մտնելու է կյանք, իսկ դռան մյուս կողմում տղամարդն է, ով ծերունի չէ, սակայն անցում է կատարելու դեպի մահ: Դուռը դառնում է ներկան՝ սահմանագիծը, որի երկու կողմերում կենտրոնացած էակները դառնում են կյանք մտնող ու հեռացող ֆիգուրները: Մագդայով սահմանվում է Ֆաուստում ուրվագծված հավերժական կանացիի գաղափարը, որը փրկությունն է ու աշխարհի նորոգումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Զիգմունդ Ֆրոյդ, «Ես և Այնը», Երևան, 2020 թվական:
2. Դավիթ Գասպարյան, «Նորահայտ էջեր», Երևան, 1996 թվական:

REFERENCES

1. Zigmund Freud, "I and It", Yerevan, 2020:
2. Davit Gasparyan, "Newly Found Pages", Yerevan, 1996:

РЕЗЮМЕ

Уникальное восприятие и беллетризация прототипа Магды в поэзии Чаренца

Заргарян Ара
Институт литературы имени Манука Абегяна,
младший научный сотрудник,
соискатель ЕГУ
Ереван, Республика Армения.

В поэзии Егише Чаренца образ женщины имел своеобразное восприятие. В этой поэтической системе каждый женский прототип привносил в поэтику Чаренца новое восприятие, символ и художественный образ. Это хорошо видно в работах Чаренца, посвященных «своим женщинам». Исключительное место в этом списке занимает Арпеник, первая и безвременно скончавшийся жена Чаренца. Арпеник становится одной из высших ценностей в поэтической системе Чаренца. По сравнению с другими женщинами она занимает превосходящее положение, неся параллель с божественностью. В произведениях, написанных в последний период жизни Чаренца, представления о женщине становятся своеобразными в поэтическом контексте тоже. В образе 9-летней Магды Чаренц синтезирует

все этапы и проявления женского возраста. С помощью Магды подчеркивается женская красота, воспетая армянской средневековой поэтической традицией. Представлено всестороннее развитие женщины и все проявления красоты. Воображаемыми сексуально-любовными отношениями с Магдой Чаренц подчеркивает удовлетворение угасающей жизнью и желанием, определяемое формулой Фрейда. Магда становится образцом новой жизни, женственности и красоты для поэта, стоящего на грани жизни и приближающегося к смерти. Очерчено восприятие Чаренца о вечной женственности.

Ключевые слова: Чаренц, Магда, прототип, Фрейд, поэзия, Арпеник, Арус, архетип.

SUMMARY

The Unique Perception and Fictionalization of Magda's Prototype in the Poetry of Charents

Zargaryan Ara

Institute of Literature after Manuk Abeghyan, Junior researcher, YSU applicant, Yerevan, Armenia.

In the poetry of Yeghishe Charents, the prototype of a woman had a unique perception. In that poetic system, each female prototype brought a new perception, symbol, and artistic picture to the poetic system of Charents. It is clearly visible in the works of Charents devoted to "his women". Arpenik, the first wife of Charents who died too young, occupies an exceptional position in that list. Arpenik becomes one of the supreme values in the poetic system of Charents. Compared to other women, she gets a superior position, carrying a divine parallel. In the works written in the last period of Charents's life, the perceptions of the woman become unique in the poetic system as well. In the character of 9-year-old Magda, Charents synthesizes all the stages and manifestations of a woman's age. In Magda it is outlined female beauty which is praised by the Armenian medieval poetic tradition. The complete development of a woman and all manifestations of beauty are presented. With an imaginary sexual-love relationship with Magda, Charents emphasizes satisfaction with the fading life and desire defined by the Freudian formula. For the poet, standing on the borderline of life, getting closer to death, Magda becomes the model of new life, femininity and beauty. Charents reading of the eternal feminine is outlined.

Key words: Charents, Magda, prototype, Freud, poetry, Arpenik, Arus, archetype.